ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Մամուլի քարտուղար Աննա Նաղդալյանին

Հասմիկ Սերգեյի Անդրեասյանից
Արմավիրի մարզ, Մայիսյան 335

Էլ. հասցե՝ andreasyan.hasmik@bk.ru

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տկն. Նաղդալյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ ծառայողական բջջային հեռախոս ունի նախարարությունը:

2. Որքա՞ն է կազմել նախարարության ծառայողական բջջային հեռախոսների խոսակցային գումարը 2018թ.-ին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ՝

Հասմիկ Անդրեասյան
16.05.2019թ.